ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ
2025-2026 ՈՒՍՏԱՐԻ, 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
Տևողությունը՝ 90 րոպե

1.Նշի՛ր եղեգնից ծնված աստծո անունը:

1. Հայկ
2. Արամազդ
3. Վահագն
4. Տիր

2.Նշի՛ր այն շարքը, որտեղ Վահագն աստծուն բնութագրող բառակապակցություններն են:

1. վայելչակազմ, թիկնավետ, խիստ գանգուր մազեր
2. վառվռուն աչքեր, հաստ բազուկներ
3. սրաթև արծիվ, արի արքա
4. խարտյաշ պատանեկիկ, հուր հեր, բոց մորուք

3. Ըստ Խորենացու՝ ո՞ր գործողությունից հետո է Շամիրամը քար դառնում:

1. Ուլունքները նետում է ծովը:
2. Ուլունքները նվիրում է հայերին:
3. Ուլունքներն ուղարկում է Ասորեստան:
4. Ուլունքները վզին՝ նետվում է ծովը:

4. Ո՞ր պատմիչի խոսքերն են. *«Թեպետ մենք փոքր ածու ենք, բայց մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված…»:*

1. Ագաթանգեղոս
2. Փավստոս Բուզանդ
3. Մովսես Խորենացի
4. Եղիշե

5. Ո՞վ է հեղինակը, և ո՞ւմ մասին է խոսքը. *«Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը...»*:

1. Ագաթանգեղոսը՝ Սահակ Պարթևի մասին:
2. Կորյունը՝ Մեսրոպ Մաշտոցի մասին:
3. Մովսես Խորենացին՝ Արամ թագավորի մասին:
4. Եղիշեն՝ Վարդան Մամիկոնյանի մասին:

6. Ո՞ր հայ բանաստեղծն ո՞ւմ մասին է ասում.

«Ծնվե՛ց, որ ծնե՛նք,
Եղա՛վ, որ լինե՛նք,
Եվ անմահացա՛վ,
Որ անմահանա՛նք…»:

1. Եղիշե Չարենցը՝ Խաչատուր Աբովյանի մասին:
2. Պարույր Սևակը՝ Մեսրոպ Մաշտոցի մասին:
3. Հովհաննես Շիրազը՝ Մեսրոպ Մաշտոցի մասին:
4. Միսաք Մեծարենցը՝ Գրիգոր Նարեկացու մասին:

7. Ո՞վ է ասում և ո՞ւմ. «*Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ. իմ մեծության չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա»:*

1. Վարդան Մամիկոնյանը՝ պարսիկ Հազկերտին:
2. Գրիգոր Լուսավորիչը՝ Տրդատ թագավորին:
3. Վասակ Մամիկոնյանը՝ պարսիկ Շապուհին:
4. Դրաստամատը՝ քուշանների թագավորին:

8. Ո՞ր միտքը չի համապատասխանում Մովսես Խորենացուն:

1.Օգտվել է 40 գրավոր աղբյուրներից:
2.Գրել է քննական պատմություն:
3.Գրել է 100 տարվա պատմություն:
4.Պահպանել է ժամանակագրությունը:

9. Ո՞վ է հաղորդում և ո՞ւմ. ***«Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով՝ խաղա՛ղ ապրիր, որտեղ որ կհաճես իմ երկրում բնակվելու»:***

1. Հազկերտը՝ Վասակ Սյունուն:
2. Բելը՝ Հայկին:
3. Շամիրամը՝ Արա Գեղեցիկին:
4. Շապուհը՝ Արշակ թագավորին:

10. Ո՞ր կետի բոլոր բնորոշումներն են հատուկ Հայկ Նահապետին:

1. Վախկոտ, անարի, համարձակ, գոռոզ
2. Հպարտ, ազատասեր, ըմբոստ, դյուցազն
3. Ստրկամիտ, ազատատենչ, գոռոզամիտ, խարդախ
4. Հանդուգն, մեծամիտ, խոնարհ, ժողովրդասեր

11. Ի՞նչ ես կարծում, Արտաշեսը Սաթենիկին սիրահարվեց, քանի որ վերջինս.

1. Շատ գեղեցիկ էր և հմայիչ:
2. Գեղաչյա էր և բարակ մեջքով:
3. Գեղեցիկ էր և շատ իմաստուն:
4. Նազելի էր և սեթևեթող:

12. Ինչո՞ւ Արտաշեսը որոշեց փախցնել Սաթենիկին.

1. Ալանների թագավորը շատ թանկ էր գնահատում իր աղջկան:
2. Ալանների թագավորը ծաղրում էր Արտաշեսին:
3. Սաթենիկը չէր ուզում ամուսնանալ Արտաշեսի հետ:
4. Արտաշեսը չէր ուզում վերադարձնել ալանների արքայազնին:

13. Ինչո՞ւ էին ամեն տարեմուտի դարբինները մուրճերերով հարվածում սալերին:

1. Երկրից հեռացնում էին չար ուժերը:
2. Ավետում էին նոր տարվա գալուստը:
3. Ամրացնում էին Արտավազդ արքային արգելափակող շղթաները:
4. Ամրացնում էին բոլոր հանցագործներին արգելափակող շղթաները:

14. Ո՞վ է առաջինը գրառել «Սասնա ծռեր» էպոսը:

1. Մանուկ Աբեղյանը
2. Գարեգին Սրվանձտյանը
3. Հովհաննես Թումանյանը
4. Ռաֆֆին

15. Ի՞նչ սկիզբ ունի մեր դյուցազներգության ամեն մի ճյուղը:

1. Վերապատմվում է նախորդ ճյուղի բովանդակությունը:
2. Ողորմիների շարք է դրվում:
3. Հակիրճ պատմվում է տվյալ ճյուղի բովանդակությունը:
4. Հերոսների անուններն են թվարկվում:

16. Ո՞վ և ո՞ւմ է խփում խնձորով: Նշի՛ր համապատասխան համարները:

Ինչ …….. խնձոր էզար ……,
Էն քառսուն փահլևան, որ էնոր համար
Յոթ տարի էնտեղ նստեր էին,
Շատ նեղացան…

1. Սանասար 2. Խանդութ 3. Ծովինար
4. Դավիթ 5. Մեծ Մհեր 6. Դեղձուն Ծամ

17. Հաջորդաբար նշի՛ր այն տողերի համարները, որոնք արտահայտում են դյուցազներգության 1-ին, 2-րդ և 3-րդ ճյուղերի ընդհանրական բովանդակությունը:

1. Սասնա տան ազատության համար պայքարը:
2. Սասնա տան շենացումը:
3. Սասնա տան հիմնումը և կառուցումը:

18. Ինչպե՞ս են հարկահանները Խալիֆային ներկայացնում Գագիկ թագավորի աղջկան՝ Ծովինարին: Հաջորդականությամբ նշի՛ր հատվածում բաց թողնված համապատասխան բառակապակցությունների համարները:

Էն խաչապաշտ Հայոց թագավորին
Մի է՛ն տեսակ աղջիկ ունի.
Աղջիկ մի ……...,
Որ ամե՛ն մի բան կ՚արժի:
Ահա, Խա՛լիֆա, զէդ …….. տեսանք,
Որ գիշեր-ցերեկ չուտես, չխմես,
Հա՛ էնոր …….:

1. հրեղեն աղջիկ
2. իրենից շատ խորոտիկ
3. շենք ու շնորհքին թամաշա անես

19. «Սասնա ծռեր» էպոսում ո՞ր հերոսն ինչպե՞ս է տեղեկանում և գտնում իր կնոջը: Հաջորդականությամբ նշի՛ր այն տողերի համարները, որտեղ ճիշտ պատասխաններն են:

1. Դավիթը Խանդութի մասին տեղեկանում է գուսանների զովքից:
2. Մեծ Մհերը Սպիտակ դևին սպանում է և ամուսնանում Արմաղանի հետ:
3. Փոքր Մհերը Գոհարին գտնում է իր հոր՝ Սասունցի Դավթի հետ մենամարտելիս:
4. Մեծ Մհերը տեսնում է Իսմիլ խաթունին, սիրահարվում և հեռանում է Արմաղանից:
5. Սանասարը Դեղձուն Ծամի մասին տեղեկանում է երկու կժի հետ ուղարկված նամակից:

20. «Սասնա ծռեր» էպոսի վերջին հատվածում՝ Փոքր Մհերի խոսքում, բաց են թողնված երեք բառ. նշի՛ր դրանց համարները համապատասխան հերթականությամբ:

Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,
Երթոր…… էղավ քանց ……մի,
Ու …… էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:

1. գարի
2. ցորեն
3. մասուր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան